

Արքեպ. Պօղոս Լեւոնեանին 30 Յուլիս 1774ին
 ի Վենետիկ գրած ձեռնագրութեան վկայականի
 օրինակն (Գիւ. Անտ.) յորում կ'ըսուի՝ «... զտի-
 րացու Ովանէսն Գաղատացի զԹերզի պաշը որդի
 օղու, որ ամաւ յառաջ, այսինքն ի 1773 հոկ-
 տեմբերի 18, ... ընկալեալ էր զչորս փոքր աստի-
 ճանս ի գերապայծառ Սամուէլ եպիսկոպոսէ
 պուրսայու, յաւուրս գտանելոյ իւրոյ ի Վէ-
 նէտիկ...»:

Սամուէլ Եպ.ին Հռոմայ մէջ անցուցած
 կեանքէն քիչ բան ծանօթ է: Տուրացցոյի
 Եպիսկոպոսն 26 Յունիս 1773ին կը գրէ առ
 Սարգիս Արքեպ. ի Լիվոնոյ, որ Ս. Ժողովոյ
 քարտուղարը Մնս. Պօրճիա՝ կը յուսայ կարգի
 դնել Պրուսայի Եպիսկոպոսին գօրծը: Եւ իրօք
 Ուղուրլեան Մ. Վ. (անդ էջ 225) կ'աւանդէ,
 թէ Սիմոն Վ. Ումուտեան, եպիսկոպոսն Գաղա-
 տիոյ, որ կաթողիկեայ ըլլալէն եւ ի Հռոմ հաս-
 տատուելէն ետեւ, 1767ին ձեռնադրիչ կար-
 գուած էր ի Ս. Ժողովոյ, վախճանեցաւ 1774ին,
 եւ յաջորդ «կարգեցաւ Սամուէլ Եպիսկոպոս
 Բիւթանիոյ կամ Պրուսայ, որ մնացեալ քանի
 մը տարիներ՝ թողեալ դարձաւ իւր Աթոռն,
 ուստի իւր տեղն ընտրեցաւ յամի 1781 Պօղոս
 Վ. Լեւոնեան Արքեպ. Ախալքխայու:» Գար-
 ձեալ՝ Սամուէլ Եպիսկոպոս 1775ին Հռոմայ
 մէջ գնած է՝ 1744ին Հռոմ գրուած կաթու-
 ղիկէական գիրք մը, «Համառօտ ընձեռու-
 թիւն...» (Մատ. Անտ. Թիւ ՄԽԹ.), որուն
 վերջը Սամուէլ Եպիսկոպոս անձամբ գրած է